

ՀԵՆՐԻԿ ՄԽԻԹԱՐՅԱՆԻ ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑԸ ՀԱՏՈՒԿ
ARMENIAN-SOCCER.COM ԿԱՅՔԻ ՀԱՄԱՐ:

Բոլոր թերթերը, ինտերնետ-կայքերը, ամսագրերը կարող են օգտագործել այս նյութը՝ նշելով բնօրինակը – armenian-soccer.com: Իրավունք չկա օգտագործելու այս նյութը վաճառքի կամ այլ մարքետինգային նպատակներով:

1. Մոտ երկու շաբաթ «Շախտյորուս» անց կացնելուց հետո ի՞նչ կարծիքի ես այդ թիմի մասին: Մպասելիքներիդ արդարացա՞ն:
Այս 10 օրվա ընթացքում հասցրել եմ բոլորի հետ ծանոթանալ, եւ կասեմ, որ թիմը համալրված է շատ ուժեղ ֆուտբոլիստներով:
2. Քո մրցակիցը «Շախտյորի» հիմնական կազմում տեղ ունենալու համար բրազիլացի Ժադսոնն է: Արդյոք գիտե՞ս նրա ուժեղ եւ թույլ կողմերը: Դժվար չի՞ լինի նրա հետ մրցակցությունը:
Կարիք չկա իմանալու նրա ուժեղ եւ թույլ կողմերը, հակառակը՝ ես պետք է այնքան աշխատեմ, որ նա ինձ չհասնի: Եւ ընդհանրապես, Ժադսոնն ինձ մրցակից չէ, այլ խաղընկեր, եւ ողջունելի է այն, որ նա խաղում է իմ դիրքում:
3. Արդեն հասցրե՞լ ես շփվել քո նոր թիմակիցների հետ: Ի՞նչ կարծիքի ես նրանց մասին դաշտում եւ դաշտից դուրս:
Բոլորի հետ շփվում եմ միեւնույն կերպ՝ թե ուկրաինացիների, եւ թե արտասահմանցիների հետ: Բոլորն էլ շատ ընկերական են տրամադրված:
4. Ի՞նչ գործոններից ելնելով ընտրեցիր «Շախտյորը», ոչ թե «Վերդերը»:
Խաղամակարդակով երկու թիմերն էլ մոտավորապես հավասար են, բայց գերմանական Բունդեսլիգան ավելի բարձր խաղամակարդակ ունի Ուկրաինաի առաջնության համեմատ:
Ես «Վերդերից» հրավեր չեմ ստացել, այդ իսկ պատճառով ընտրեցի «Շախտյորը»: Իսկ ներկայիս թիմը աշխարհի թիմային դասակարգման ցուցակում ավելի բարձր տեղ է գրավում, քան Բունդեսլիգան ներկայացնող բրեմենյան թիմը:
5. 2008թ. Լիոնի «Օլիմպիկը» հետաքրքրություն էր ցուցաբերում քո հանդեպ: Ինչպե՞ս ես գնահատում քո՝ Ֆրանսիա վերադառնալու հնարավորությանը: Չե՞ որ այդ երկիրը լավ ծանոթ է քեզ, եւ ադապտացիայի խնդիր չի առաջանա:
Եթե Ֆրանսիայից հրավեր լինի, կմտածեմ, բայց ցանկանում եմ կատարելագործվել մեկ այլ երկրում, քանի որ լավ գիտեմ ֆրանսիական ֆուտբոլի բացասական կողմերը:
6. Գաղտնիք չէ, որ Միրչե Լուչեսկուն, այսպես ասած, քո երկրպագուն է: Հատուկ վերաբերմունք իր կողմից զգացե՞լ ես, թե նման բան գոյություն չունի:
Ո՛չ, նման բան չկա, նա ինձ այլ ֆուտբոլիստներից բարձր չի դասում, ավելին՝ իմ հանդեպ շատ ավելի պահանջկոտ է եւ խիստ:

7. Հասկանալի է, որ «Շախտյորը» քո վերջին ակումբը չէ: Ո՞ր երկրի առաջնությունն է քեզ առավել դուր գալիս, որտե՞ղ ես տեսնում քեզ քո կարիերայի հաջորդ էտապում: Բազմիցս ասել եմ, որ շատ եմ սիրում անգլիական ֆուտբոլը, ու եթե բախտ վիճակվի՝ կցանկանայի մի քանի մրցաշրջան անցկացնել այնտեղ: Ամեն դեպքում, հաջորդ էտապի մասին վաղ է մտածել, քանի որ ոչինչ դեռ չեմ արել եւ ոչնչի դեռ չեմ հասել «Շախտյորում»:

8. «Մետալուրգում» հանդես գալու ընթացքում դու բնակվում էիր ակումբի բազայում: Այժմ ինչպե՞ս են դասավորվում քո կենցաղային հարցերը «Շախտյորում»: Այժմ էլ բնակվում եմ բազայում, ու դեռ այնտեղ կբնակվեմ, քանի որ իմ առջեւ դրված նպատակներս շարունակվում են եւ շատանում:

9. Ինչպե՞ս ես անցկացնում ազատ ժամանակդ: Դռնեցկը ժամանցի տեսանկյունից հարմա՞ր քաղաք է, կա՞ն ժամանցի տեղեր, որոնք հավանում ես: Ազատ ժամանակ չունեմ, քանի որ այս խաղաշրջանում խաղերը շատ խիտ են դասավորված՝ շաբաթական 2 հանդիպում ենք անցկացնում: Այնպես որ ազատ ժամանակ չի լինում, իսկ եթե լինում է՝ այն տրամադրում եմ վերականգնման գործընթացին:

10. Նորամուտդ «Շախտյորի» կազմում «Օբոլոնի» դեմ հաջող չստացվեց: Պատճառները կնշե՞ս: Այո՛, նորամուտս լավ չստացվեց, բայց չեմ անհանգստանում, քանի որ առաջին խաղով ոչինչ չի որոշվում: Ես առաջ եմ նայում ու մտածում առաջիկա խաղերի մասին:

11. Չեմպիոնների լիգայում «Պարտիզանի» դեմ խաղում հանդես չեկար: Հայտավորված չէիր նաեւ պահեստայինների կազմում: Ըստ քեզ՝ ե՞րբ կկայանա նորամուտդ Չեմպիոնների լիգայում: Եթե չեմ խաղացել, ուրեմն մարզիչն այդպես է կամեցել՝ իր տակտիկական սխեմայում ես տեղ չեմ գտել: Կխաղամ, երբ զգա որ թիմին օգուտ կտամ:

12. Մեկնաբանիր «Շախտյորի» շանսերը ՉԼ-ում փլեյ-օֆֆ դուրս գալու վերաբերյալ: Շատերի կարծիքով խումբն այնքան էլ բարդ չէ: Թիմի առջեւ խնդիր է դրված՝ դուրս գալ ՉԼ-ի փլեյ-օֆֆ փուլ: Կարծում եմ, որ բավական դժվար է լինելու, թեեւ առաջին խաղում կարելուր 3 միավորի հասավ թիմը: «Բրազայի» հետ հանդիպումն ավելի կարելուր է լինելու:

13. Վերադառնալով Հայաստանի հավաքականի անցկացրած խաղերին: Ինչպե՞ս կբացատրես Մակեդոնիայի հետ խաղում կատարվածը. նորից հոգեբանությո՞ւն: Պետք չէ անտեղի տրագեդիա սարքել, քանի որ ոչինչ դեռ չի պատահել: Առայժմ մենք պետք է գոհ մնանք մեր խաղից, քանի որ վերջին տարիներին 2 ստաբիլ խաղ չէին անցկացրել: Իսկ հիմա ամեն ինչ իր հունով ընթանում է:

14. Սարգիս Հովսեփյանի հետ միասին հանդիսանում ես մեր հավաքականի առաջատարը: Կա՞ն շանսեր, որ մոտավորապես 2 շաբաթ հետո Սլովակիայի հետ Երեւանում կայանալիք խաղում չի կատարվի այն, ինչ կատարվեց Սկոպյեում:

Իսկ ո՞վ գիտի թե վաղն ի՛նչ է լինելու: Մենք դաշտ ենք դուրս գալիս միայն հաղթելու նպատակով, բայց ոչ ոք ապահովված չէ ամենից, ինչ կատարվում է խաղաղաշտում:

15. Բոլորս սպասում էինք, որ գոնե այս ընտրական փուլում մեր հավաքականը ավելի լավ մեկնարկ կունենա, սակայն ունենք ընդամենը 1 միավոր 6 հնարավորից: Այս ամենը հաշվի առնելով՝ ինչպե՞ս ես գնահատում մեր շանսերը ԵՎԸՈ-2012-ի ընտրական փուլում:

Իսկ ո՞վ ասաց, որ մենք 6 հնարավորից 6 միավոր պիտի վաստակեինք: Էլի եմ ասում՝ ոչ մի թիմ ապահովագրված չէ պարտությունից: Մենք էլ չհասկացանք, թե ինչպես կարողացանք այսպես պարտվել Մակեդոնիայի հավաքական, բայց եղավ այն, ինչ եղավ:

16. Ունե՞ս կամ ունե՞ր կուռք ֆուտբոլիստներից:
Զիդանը:

17. Համաձայն ես, որ լավ ֆուտբոլիստ դառնալու համար, հատկապես քո դիրքում, ֆուտբոլիստը պետք է լավ ինտելեկտուալ պաշար ունենա:
Ոչ թե միայն իմ դիրքում, բոլոր դիրքերում պիտի ինտելեկտով ուժեղ լինես, որ կարողանաս հաղթահարել բոլոր դժվարություններն ու լինես ուժեղ ֆուտբոլիստ:

18. Համաձայն ես այն կարծիքին, որ ազգային թիմը պետք է ղեկավարի բարձր կարգի արտասահմանյան մասնագետ:
Եթե ունես ուժեղ ֆուտբոլիստներ, մարզիչը շատ քիչ բան կարող է փոխել: Բայց եթե մարզիչը առաջին հերթին լավ հոգեբան է, ապա շատ բան կարող է փոխել:

Քեզ հաջողություն ենք ցանկանում ե՛ւ ակումբում ե՛ւ հավաքականում: Շնորհակալություն քեզ քո խաղի համար:
Շնորհակալություն: